[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ ապրանքագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
16	Սեպտեմբեր	2019 թ.		Բ	8287704600
[4] Մատուցման ամսաթիվը				Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի	
3	Սեպտեմբեր	2019 թ.		Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար
	2 Օգոստոս, 2019 թ.	1

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	7	5	4	2	8	1	5	9	
[9] Անվանումը	ՎԱՀՐԱՄ ՀԱԿՈԲՅԱՆ Անհատ ձեռնարկատեր (ԱՁ)								
[10] Բանկային տվյալները	"Հայէկոնոմբանկ" ԲԲԸ, "Սևան" մ/ճ	N 163148151398							
[11] Գտնվելու վայրը (հասցեն)	ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՄԵՎԱՆ ՄԵՎԱՆՍ. ՄԵՎԱՆԵՑՈՒ Փ. 21 27								
[12] Լրացուցիչ տվյալներ									

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

[13] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3	
[14] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ								
[15] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	N 900011000834							
[16] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5								
[17] Լրացուցիչ տվյալներ									
[18] Ռում միջոցով	Անուն, ազգանուն								
	Լիազորագիր	Համար							
		Ամսաթիվ							

[19] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

NN Հ/Կ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Ընդհանուր ծավալը կամ ժամանակաշրջանը	Միավորի գինը	Արժեքը
1	2	3	4	5	6
1	69104218 քրեական գործի շրջանակներում "Լիդիան Արմենիա" ՓԲԸ-ի կողմից արդյունահանված ծավալների հաշվարկ	հա	6	100000	600000
Ընդամենը					600000

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ GHAZARYAN EDIK 1101551127

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ծառայություն (աշխատանք) ստացող՝

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

16/09/2019 10:41:40

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

փորձագետ նշանակելու մասին

27-ը նոյեմբերի 2018թ.Ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում քննվող թիվ 69104218 քրեական գործով քննչական խմբի քննիչ Ա.Գեղամյանս, քննարկելով սույն քրեական գործի նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

Գեոթիմ» փակ բաժնետիրական ընկերությունը, հետագայում վերանվանված՝ «Լիդիան Արմենիա» ՓԲԸ, ՀՀ բնահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը ներկայացրել է ՀՀ Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի վարչական սահմաններում գտնվող՝ Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի հանքարդյունահանման համալիրի նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, որի հիման վրա 2016թ. ապրիլի 29-ին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից տրվել է շրջակա միջավայրի վրա ազդեցության դրական եզրակացություն:

Մինչդեռ տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ ՀՀ բնապահպանության նախարարության համապատասխան պաշտոնատար անձինք, տեղեկացված լինելով Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի հանքարդյունահանման համալիրի շահագործման դեպքում շրջակա միջավայրի քիմիական աղտոտման վերաբերյալ վտանգավոր ռիսկերի մասին, բնակչությունից դիտավորությամբ թաքցրել են մարդկանց կյանքի և առողջության համար վտանգավոր քիմիական նյութերով շրջակա միջավայրի աղտոտման վերաբերյալ տեղեկությունները:

Դեպքի առթիվ 2018թ. հուլիսի 20-ին ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 282-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 69104218 քրեական գործը:

ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի 04.07.2018թ. թիվ 30 և 17.07.2018թ. թիվ 33-Ա հանձնարարագրերի հիման վրա «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերությունում իրականացված ստուգման արդյունքում արձանագրվել են Վայոց Ձորի մարզի Ջերմուկ համայնքի Ամուլսարի ոսկեբեր երկրորդային քվարցիտների հանքավայրի լեռնահատկացման ԼՎ-245 ակտի սահմաններում ընկերության կողմից ընդերքի ապօրինի օգտագործման փաստեր:

Մասնավորապես. «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերության կողմից օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի և նախագծի պայմանների շեղումներով, ապօրինի, առանց ընդերքօգտագործման իրավունքի շուրջ 3 հեկտար մակերեսով տարածքից՝ 0,5-10 մետր խորությամբ տարհանվել է բազալտանման լեռնային զանգված և 2 հեկտար մակերեսով տարածքից՝ 0,5-8 մետր խորությամբ՝ կավանման լեռնային զանգված,

որի հետևանքով շրջակա միջավայրին, ընդերքին, դրանում պարփակված օգտակար հանածոներին պատճառվել է էական՝ ընդհանուր առմամբ շուրջ 18 միլիոն ՀՀ դրամի վնաս:

Վերը նկարագրված դեպքի առթիվ ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում 2018 թվականի օգոստոսի 29-ին որոշում է կայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 291-րդ հոդվածի 2-րդ մասով թիվ 61209118 քրեական գործը հարուցելու մասին:

Քրեական գործը նախաքննության կատարման նպատակով ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչություն և ընդունվել վարույթ:

2018թ.-ի սեպտեմբերի 04-ին կայացված որոշմամբ թիվ 61209118 քրեական գործը միացվել է թիվ 69104218 քրեական գործին և նախաքննությունը շարունակվում է մեկ վարույթում:

Նախաքննության ընթացքում Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերությունում իրականացված ստուգման արդյունքում արձանագրված ընդերքի ապօրինի օգտագործման և դրա հետևանքով շրջակա միջավայրին ու պետությանը պատճառված վնասի հետ կապված մի շարք հանգամանքներ պարզելու նպատակով նշանակվել է շինարարատեխնիկական, ապրանքագիտական, նյութագիտական և էկոլոգիական համալիր փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ ԳԱԱ ''Փորձաքննությունների ազգային բյուրո'' ՊՈԱ կազմակերպության փորձագետներին:

Համալիր փորձաքննության շրջանակներում փորձագետների կողմից միջնորդություն է ներկայացվել փորձաքննության կատարմանը որպես փորձագետ ներգրավել լեռնային զանգվածի ծավալների չափագրման բնագավառում մասնագիտական գիտելիքներ ունեցող մասնագետի (մարկշեյդեր):

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 85-րդ և 249-րդ հոդվածների պահանջներով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Սույն քրեական գործով ''Վահրամ Հակոբյան'' Ա/Ձ-ի աշխատակից Վաչագան Ֆռունզիկի Հակոբյանին /նույնականացման քարտ՝ 000946822, քարտեզագրողի, գեոդեզիստի, չափագրողի, հողաշինարարի որակավորման վկայական՝ հմ.078/ նշանակել փորձագետ:
2. Փորձագետին բացատրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված փորձագետի իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու և եզրակացություն տալուց խուսափելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Թիվ 69104218 քրեական գործով քննչական խմբի քննիչ՝ **Ա.Գեղամյան**